ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
28.12.2022 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/69-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «12» 12 2023թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Մելիքյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 28.12.2022թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/69-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5, 8.8 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի աղյուսակի «Ժամկետը» սյունակում նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 280 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված օրացուցային գրաֆիկը փոփոխել և հաստատել նոր խմբագրությամբ, համաձայն՝ սույն համաձայնագրի N1 հավելվածի:

## 2. *Այլ պայմաններ*

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան<br>ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Էլեկտրոնային փոստի հասցե՝<br>gnumnermecamor@mail.ru<br>Հ/Հ 900332239061<br>ՀՎՀՀ 04440608 | «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ<br>ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Վարդաշեն 4փ., 42տ.<br>«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ<br>Էլեկտրոնային փոստի հասցե՝<br>mtallc2021@gmail.com<br>Հ/Հ 220533334094000<br>ՀՎՀՀ 00497639 |
| Համայնքի ղեկավար՝ ______________ Վ. Խաչատրյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | Տնօրեն՝ ______________ Տ. Մելիքյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 1*
*«28» դեկտեմբերի 2022թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/69-1 ծածկագրով պայմանագրի*
*«12» ______12______ 2023թ. կնքված*
*թիվ 3 համաձայնագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

**ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻ ՇԵՆՔԸ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Մեծամոր համայնքի նախկին պոլիկլինիկայի շենքը Մեծամորի համայնքապետարանի վարչական շենք դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ | Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների սկզբից 280 օրացուցային օրվա ընթացքում |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների սկզբից 280 օրացուցային օրվա ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Էլեկտրոնային փոստի հասցե՝ gnumnermecamor@mail.ru
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ________________ Վ. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Վարդաշեն 4փ., 42տ.
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ mtallc2021@gmail.com
Հ/Հ 220533334094000
ՀՎՀՀ 00497639

Տնօրեն՝ ________________ Տ. Մելիքյան
/ստորագրություն/
Կ.Տ.